

Կոյսը վաստակաբեկ ու ցուրտէն սառած ինկաւ. հոն, կէս գիշերին, բաց դաշտին մէջ, զրեթէ դուրսը, ձիմին վրայ Մանկիլ եկաւ.... Թշուա՛ռ կին, թշուա՛ռ Մանկիկ: Ո՛չ, ի՞նչ ծնունդ, ի՞նչ սառ զիշեր, ի՞նչ աղքատութիւն, կատարեալ մերկ՝ այդշափ մատղաշ հասակին, հին վերարկուի մը սառ ծալքերով սոսկ փաթթուած, խէ՞ղն Մանկիկ:

Հապա ի՞նչ, կոյսը, երբ կ'զգար մասնաւանդ իր կուրծքին վրայ փոքրիկ մարմույն սարսուալը, երբ կը տեսնէր ցուրտէն կապուտցած մատղաշ զէմքը.... Աստուա՛ճ իմ:

.... Ո՛հ, այո՛, դուք մենէ աւելի թշուառ էիք, մենէ աւելի լցուած, մենէ աւելի աղքատ: Նէս աւելի ևս կը տառապէր, Ան ալ, Ա՞ն մանաւանդ....

.... Ո՛չ, ալ չտրտնջներ մենք. համբերենիք՝ անոնց պէս հուռ, անոնց պէս համակերպած. «Թող կամքդ ըլլայ»:

Օ՞ն, սիրո՞ւմ հոգեակս, մի՛ լար, ա՛լ մի լար. խելօք կեցիր. օ՞ն, օրօ՞ր, օրօ՞ր....

» Ալաօր ծնունդ, մ՛ծ աւետիս.

» Հնչեն թող սրբինջներ, թող հնչեն  
[տկնորներ....]

Հիմա կարծես ամերում մը կը զգանք մեր վիշտերուն, այնպէս չէ՞.... Քնանանք ուրիշնում....

» Ի՞նչ գեղեցիկ, ի՞նչպէս բաղցը, հը-  
[մայիչ]

» Ե երկնային Մանուկ թիսուս մեր  
[փրկիչ:

Կը ընանայ.... Շըթունցներն ու այսերը գոյն առած են կարծես: Նա, քունին մէջ կը ժապտի ալ, և ի՞նչ անուշ ժպիտ, բնաւ տեսած չունէի այս տեսակ բան մը: Այո՛, Ա՞ն է որ բժշկեց զինք, արդեօք իրեն կ'երեփ՝ ալ: Յովհաննէս, այո՛, դէմ դիմաց կը տեսնէ թիսուս Մանուկը.... Ի՞նչ երջանիկ են մանուկները....»:

Ու մեղմիկ՝ և ճկուն շարժումով մը կը ասէք պատիկ օրորոցին ցով: Եւ երբ իր ափին մէջ իրարու կը յաջորդէին վար-

դարանի հատիկները, երախտագիտութիւնն ու ուրախութիւնը, հեշտալի և խաղաղ ուրախութիւնն մը, ուրախութիւնը մանկիկին՝ որ իր յողնած զլուխը կը ձգէ իր մօր կործքին վրայ... ու կը հանգչի, երկնային ժպիտ մը կը փթթեցնէր անոր շըթներուն վրայ, և անոր աչքերուն մէջ՝ այն վճիռ ու բաղցը բոցը որ կ'այլակերպէ սուրբերը: Ո՛հ, այո՛, նէ վստահ էր, նէ բաջ կ'զգար թէ առանձին չէր ինք, թէ բարեհաճ խորհուրդ մը կը հակէր իր վրայ, թէ կան վերը բարեկամ հոգիներ, վերը մայրախնամ կոյսը, վերը՝ մեզ եղայրացած Աստուած մը, վերը՝ ամենաբարի, ամենակարող Հայըր՝ որ կը մեղմէ հոգիրը խուզուած գառնուկին ինայելու համար, ու տաք մուշտակով մըն ալ կը զգեստաւորէ մննդուկները:

Այս պարզ հոգիներուն համար երկինը հարուստ է միշտ, ու կեանքը անսատդ զիշեր մը չէ: Կը բալեն անոնք դէպ այն ասազը՝ զոր կ'ընդուշմարեն շատ հնոուէն, հորիզոնին ալ անդին... արշալուսի ցոլքերուն պէս... յափտենականութեան արշալուսին:

Թշուա՛ռ ծնունդ. Երջանիկ ծնունդ:

Թրգմ. Ալ. Վ. Սիրութեան

## ԿԱՂԱՆԴԻ ԳԻՇԵՐԸ

Կաղանդի գիշեր էր ...

Զիւնը ծածկել էր սարերն ու ձորերը. հապարտ լեռների գագաթները ծածկել էին ճերմակ ձիւնի տակ: Բլուրների անուշիկ ու աննման երգերը էլ չեն հնչուում. գիշերը, վազուկ, օրօր երգող ջուրերը ձմրան կապանցների տակ լոիկ - մշիկ ննջուում էին: Ջայն - ծապտում չկար, մինամինակ սաստկաշունչ բամին էր ձայնում լեռների և տանիքների վրայից սուրալով:

Կաղանդի գիշեր էր, ի՞նչ պաշտուած, ի՞նչ անոյշ գիշեր....:

— Մայրիկ ինչո՞ւ լաց ես լինուում,

— Լաց չեմ լինում, որդի:

— Հապա ինչո՞ւ աչքերդ թաց են, ախ  
մայրիկ ջան, ինչո՞ւ ես լաց լինում:

— Բան չկայ: . . .

Լոռիթինը կապարի նման ծանր, տի-  
րեց սենեակին մէջ: Մի գրասեղանի վրայ  
պլազում էր ճրագը ազօտ և հեացող լոյսով:

— Ո՞ւր է հայրիկս, մայրիկ ջան:

— « Ո՞ւր է հայրիկս », պարզ մի  
խօսք, բայց այն խօսքը իրա մէջ պա-  
րունակում էր ինչ վշտեր, ինչ արցունք-  
ներ:

« Ո՞ւր է հայրիկս » . . . խեղճ մօրը  
արդէն վշտահար սիրտը կարծէց մի սուր  
միսեցին, նա սարսոաց, ինչպէս մի նուրը  
եղէք փոթորիկների առաջ: Նա չկա-  
րողացաւ պատասխանել, նրա սիրտը այ-  
րուեց, նա ուզում էր ենել խղղել իր  
մէկ հատիկ զատակը. « Ինչո՞ւ նա հար-  
ցրեց », ինչո՞ւ նա « Ո՞ւր է հայրիկս » ա-  
սաց, մտածում էր մայրը. և այս միտքը  
իրան կատաղեցնում էր:

— Ո՞ւր է հայրիկս, մայրիկ . . .

Նորից, էլի սարսոաց, էլի կատաղեց:

— Չեմ գիտեր, Բարկէն:

— Չես գիտեր, պահում ես ինձանից  
դուն. դու գիտում ես թէ հայրիկս ինչ  
եղաւ, գիտում ես, բայց չես ուզում ինձ  
ասել:

— Տարաւ հա՛, տարաւ:

— Ո՞վ տարաւ, մայրիկ ջան:

— Աստուած տարաւ:

— Ո՞ւր տարաւ, մայրիկ:

— Երկինքում, տես Բարկէն տես,  
ինչքան գտա կերպով պլազում են աստ-  
ղերը այնտեղ. նա Բարկէն, այնտեղ է  
հայրիկը, այնտեղ՝ նա աստղերին ծո-  
ցում . . .

— Ինչո՞ւ Աստուած մեզ էլ չէ տա-  
նում, ինչքան լաւ է մայրիկ այնտեղը,  
մենք էլ զնանք չեն աստղերի ծոցում,  
հայրիկս քովք:

— Մի խօսի այդպէս խօսքեր, Բարկէն  
ջան, մի վիրաւորեր սրտիկս, ախ արենուզ  
մատաղ, ախ քո սիրուն արևս հողը  
դնեմ, մի խօսի այդպէս խօսքեր, էյ

արդէն սիրտս խոցուել է, այրուել . . .

— Արևս խաւարի, մայրիկ ջան, ախ  
ինչքան լաւ է երկինքը, ինչքան զեղեցիկ.  
ասում են այնտեղ հրեշտակներ կան,  
բարի հրեշտակներ, ես էլ բարի եմ, ին-  
չո՞ւ Աստուած ինծի այն բարիներին քովք  
չէ տանում:

— Հա՛ Բարկէն հա՛, այնտեղ բարի  
հրեշտակներ կան, բարի հոգիներ, հայ-  
րիկ էլ այնտեղ է, նրանց բովիկը, մէկ  
օր էլ Աստուած մեզի կը տանի:

— Խօ՛մ, ինչո՞ւ շուտ չէ տանում:

— Կը տանի . . . Բարկէն  
երկինքը զիտիր, տես հայրիկը մեզ է  
նայում աստղերի ծոցից, հայրիկը մի աստղ  
է երկինքում:

— Սուտ ես խօսում, երբ մէկը մեռնի  
նորա աստղը էլ յաւիտեան չի փայլի,  
սուտ ես խօսում:

— Հա՛ երբ մէկը մեռնի, նորա աստղը  
էլ փայլի, բայց բարիներին աստղը  
երբէց չի մարիր, յաւիտեան կը պլազայ  
երկնքում:

— Իմ աստղն էլ չի մարիր, այնպէս  
չէ . . . Բայց մայրիկ այսօր շու-  
կայում Լեւոնին հօրը տեսի. նա մրգա-  
վաճախց միքաքը էր զնում. այսօր տեսի  
իմ ընկերներս, նրանց ձինին վրայ գա-  
զում էին ուրախ, զուարթ, ցատքում հնի,  
երգեր էին երգում. ախ էն երզը ան-  
ցեալ տարի ես էլ երգում էի, մայրիկ  
նա չս երգն է,

« Ինչ անուշիկ օր այսօր

կազանդ պապիկն է եկել,

Հէյ ընկերներ ցատքենք, խաղանք,

կազանդ պապիկն է եկել . . . »:

ինչքան ուրախութեամբ էի երգում  
էս երգ . . . բայց հիմա . . .

— Զէ մի լա, Բարկէն, տես ես էլ  
չեմ լալիս:

— Ախ մայրիկ ջան, ոնց չլամ . . .  
անցեալ տարի այս ատենս երգում էի, մո-  
մեր վառում, հայրիկս ինծի նուէրներ էր  
տալիս, համրուրում էիր դուն ինծի,  
մենք ուրախ էինք, կաղանդի սեղան ու-  
նէինք . . .

— Մի՛ խօսիլ, սիրտս մի՛ վիրաւորիր, սիրտս խոցոտ է, զարդոտ էլլի՛ ...

իմ սիրտս էլ, մայրիկ ջան, շատ է այրուած. այսօր տեսի Լևոնի, նա ինչե՞ր էր ասում. «Հայրս ինծի ինչե՞ր նուէր պիտի տայ, կաղանդ է կաղանդ » ... երգում էր նա ուրախութեամբ. ես տիտուր էի. ինչո՞ւ, մայրիկ, Ալսուած մարդերը հաւասար չէ ստեղծել, ես տիտուր էի՝ նրանց ուրախ. կամ ինչո՞ւ գոնէ նրանց իմ հետ չէին տիտուր, ինչո՞ւ մայրիկ այս տարի կաղանդի սեղան չունինք. նա անկիմում էր, անցեալ տարի մեր սեղանը կար, հայրիկս էլ այնանդ էր, նա ինծի նուէրներ էր տալիս ... ախ մայրիկ ջան ...

— Ինչ անենց զաւակս, սիրական Բարկէնս, ախ կանաչ արկուտ մեռնիմ ես, մի՛ լաց լինի:

— Մայրիկ լաց լինենք, աչքերիցս արցունք է զալիս, լաց լինենք հանգո՞ւր հանգո՞ւր. մայրիկ ջան զրկի՞ր ինծի, պինդ պինդ սեղմի՞ր կրծքիդ վրայ, լաց լինենք մենց ...

— Եկո՞ւր զրկեմ քեզի սիրական, անսման Բարկէնս. ինչե՞ր անցան մեր զլիսերից, ինչքան ուրախ էինք, ինչքան երջանիկ, այս սկ ճակտառագիր:

Նրանք իրար զրկեցին, փոքրիկ Բարկէնը մօրը զրկին մէջ լաց էր լինում:

— Համբուրիր ինծի, համբուրիր ինծի մայրիկ ջան, թող այդպէս ցնանամ ես ...

Դրասում հովը մոնչում էր, ոռնում ինչպէս մի կատած գաղան, պատուհաններին էր խիտում ուժգին կերպով:

կաղանդի զիշեր էր ... :

Բ

— Մայրիկ ջան... կաղանդի սեղան... քո համրոյները ... էն նախշուիկ մոմերը ... հայրիկիս նուէրները ... ախ ... մայրիկ ջան

Երազում էր Բարկէն իր մօրը զրկումը, երազում էր ...

— Արևուտ մատաղ, Բարկէն ջան, օրու արև չի տեսած ցաւում է սրտիկդ ...

— Մայրիկ ջան ... երկինքը ... ինչքան լաւ է ... հայրիկս ... ախ մայրիկ ջան, հոյրիկս ... ինչքան լաւ է ... \*

Գեղեցիկ էր Հեղնարը, կապուտիկ աչքերով, ոսկի թել - թել մազերով: Նրա զիւղի ազդիկներից ամենալաւն էր նա, քանի ջահէներ նրա վրայ աչք էին տընկել, նրա սէրով հող էին մտել, քանի քանի երգեր էին շինել նրա վրայ ... Գիւղի ջահէների թերանումն էր Հեղնարը:

Երբոր երիտասարդներից մէկը «Հեղնար» այս անուշիկ, այս պաշտուած անունը լսէր՝ կը դոզա՞ր ... Հեղնար ... պաշտելի էակ մ'էր նա իրանց զիւղում:

— Ակ օր եղեր այն օրը ... ախ մայրիկ ջան չը ծնէիր ինծի ... ասում էր խեղճ մայրը՝ Բարկէնը պինդ պինդ սեղմած էր կրծքին:

— Չը ծնէիր ինծի, մայրիկ ... ինչե՞ր էր անցել նրա զլիսեր, քանի անգամներ նա ճամրին լսել էր ջահէների նրա վրայ շինած երգը, քանի անգամ նա ամաշել էր ...

— Անոյշ էին այն օրերը, անուշիկ էր կեսանը ինծի համար այն օրերում ...

Ակ մայրիկ ջան չը ծնէիր ...

Արշակ, անուշիկ Արշակ, արդեօր այլտեղ աստղերի ծոցում կաղանդի - սեղան կայ ... սիրելի ամուսինս, օրու արև չի տեսած մահը քեզ իւլեց իմ զրկից. Բարկէնը ննջում է մուշիկ մուշիկ այժմ այնտեղ, քու տեղը ...

գ

— Մայրիկ ջան, հայրիկս ... կաղանդի - սեղանը ... անուշիկ մայրիկ, ինչքան ... ինչքան լաւ է ... երկինքը ...

Մի՛ հրեշտակ կամացուկ սենեակի պատուհանից ներս նայեցաւ ...

Գեռ կաղանդի զիշերը չէր անցել ... Բարկէնը և Հեղնարը երկնքում Արշակին էիտ կաղանդի էին տօնում ...

կաղանդի զիշեր էր ... :

ԱՐՄԵՆ ԵՐԻԱՄ